ԼՐԱՑՈՒ

ԴԵՐԵԴԻ ԿԱՄՐՋԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի միջնադարյան ճարտարապետության յուրօրինակ կառուցվածքներից են կամուրջները, որոնց վրայով էր կատարվում անիվավոր փոխադրամիջոցներով, գրաստով և հետիոտն երթևեկությունը։ Գուգարքի Տաշիր գավառում, Դեբեդ գետի վրա, տեղի թագավորական, նախարարական տների ներկայացուցիչները կառուցել են մի քանի կամուրջներ, որոնք, ամիրսպասալար Սարգիս Զաքարյանի դստեր, Արաս թագավորի կնոջ՝ Վանենիի, XII դ. վերջերին կառուցած Սանահնի կամրջից բացի, մեզ են հասել առավելապես ավերակ վիճակում։ Այդ կամուրջները սպասարկել են լոռու ձորով անցնող մայրուղին, տարանցիկ առևտրի կարավանային ճանապարհի կամրջային անցումները, մերձակա շենների միջգյուղական երթևեկը և Տաշիրի մենաստանները՝ Հաղբատ, Սանահին, Բարձրաքաշի ս. Գրիգոր և այլ նշանավոր հոգևոր հաստատությունները տանող ճանապարհները։ Մատենագրական աղբյուրներում այդ կառուցվածքների մասին տեղեկություններ չեն պահպանվել։ Տաշիրում, մասնավորապես Դեբեդի վրա կառուցված կամուրջների վերաբերյալ արժեքավոր և հավաստի տեղեկություններ են հաղորդում մեզ հասած սակավաթիվ վիմական արձանագրությունները, որոնց հրատարակության համար հայագիտությունը պարտական է ակադեմիկոս Հ. Օրբելուն[1]։

Վերջերս Թումանյան բանավանում (պատմական Զագեձոր, Ջաղի ձոր) գտնվելիս մեզ հայտնի դարձավ Դեբեդի վրա կառուցված մեկ այլ կամուրջի կառուցման մասին հետաքրքիր մի արձանագրություն, որը գիտական հրատարակություն չունի։ Հնավայրը, ուր գտնվում է շինարարական արձանագրությամբ խաչքարը[2], տեղի բնակիչների մոտ հայտնի է Ջախչի գլուխ անունով։ Խաչքարը զետեղել են միջնադարյան միաթռիչք կամրջի հազիվ նշմարվող խելից մի քանի մետր հեռավորության վրա գտնվող ոչ խորը քարայրային ծածկի տակ։ Դեբեդի վրա ձգված այս կամրջի մնացորդներն այնքան աննշան են, որ առանց հնախուզական աշխատանքների առայժմ բացառվում է այն չափագրելու հնարավորությունը։

Կատարողական բարձր վարպետությամբ և զարդաձևերի բազմազանությամբ աչքի ընկնող այս խաչքարը տուֆ հիշեցնող վարդագույն քարից է։ Խաչարձանի պատվանդանը երկաստիճան է, որձաքարից. լայնությունը 130 սմ է։ Բուն խաչքարի բարձրությունը 175 սմ է, լայնությունը՝ 97 սմ, հաստությունը՝ 22 սմ։ Այս գեղաքանդակ խաչքարը (Նկ. 1) ունի հյուսվածքաձև հորինված շրջանակ, որի զարդաքանդակների մեջ առատորեն խառնված են բուսական տարրերը և երկթել հյուսվածքի զարդերը։ Խաչքարի քիվը, որի մակերեսի մի մասը պոկվել է, հարուստ հարդարանք ունի։ Քիվի ճակատային մասը կենտրոնում զարդարված է կիսակլոր, մահիկաձև զարդաքանդակով։ Քանդակագործը խաչքարի հարթության վրա պատկերել է երկու քանդակազարդ խաչեր։ Սակայն այդ պատկերները խաչարձանի մակերեսի հորինվածքային կենտրոնը չեն կազմում. որպես այդպիսին ծառայում է այն զարդաքանդակը, որը զետեղված է երկու խաչաքանդակների միջնամասում։ Զարդապատկերի ստորին մասը կազմում է շքեղ վահանը՝ վեցաթև աստղի քանդակով։ Այս պատկերից դեպի վեր են ձգվում կենաց ծառի ճյուղերը։ Քանդակագործության տեխնիկական հնարքներին քաջածանոթ քանդակագործը կենաց ծառի պատկերը վերարտադրել է մանրանկարչության ստեղծագործություններին հատուկ ոճավորումով։ Կոթողի ստորին մասում, որտեղ ավանդաբար տեղադրվում է խաչարձանի վահանը, քանդակագործը խախտել է վահանի ավանդական տեղը. այն հատկացրել է արձանագրությանը, և վեցաթև աստղի զարդամոտիվով վահանը տեղադրել է ոճավորված կենաց ծառից ներքև։

Զագեձորի խաչքարի վրա փորագրված՝ կամրջի շինարարության իրողությունն ազդարարող արձանագրությունը մեզ է հասել գրեթե

---

[1] И. Орбели, Избранные труды, Ереван, 1963, էջ 451—454, տե՛ս նաև Վ. Մ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960, էջ 88։

[2] Խաչքարի մասին տեղեկացնելու համար շնորհակալություն ենք հայտնում Թումանյան բանավանի բնակիչներ Վարդան Հարությունյանին և Շիմշատ Գալստյանին։

անվթար վիճակում։ Արձանագրության ութերորդ տողի հնչյունախմբից և հաջորդ վնասված տողից բացի աղարտված, եղծված գրեր չկան, և այն ընթերցվում է լիակատար հավաստիությամբ։ Արձանագրության շարունակությունը՝ վերջընթեր հինգ փոքր տողերը, գրիչը զետեղել է խաչքարի հարավային կողին։ Ահա կամրջի մեր կողմից ընդօրինակված 1247 թ. շինարարական արձանագրության բնագրի գծագրական ընդօրինակությունը.



Գծ. 1

Արձանագրության վերծանությունը հետևյալն է.

Ի Թ(ՈՒ)Ս/ՈՂՋ (1247)/ԵՍ ՀԱՄԼԻԿՍ ՈՐԴԻ ՍՄԲԱՏԱՑ ԹՈՌՆ ՀԱՄԱՋԱՍՊԱ ՇԻՆԵՑԻ ՁԿԱՐՄՈՒՆՋՍ ԵՒ ԿԱՆ/ԿՆԵՑԻ ՁԽԱՋՍ Ի ՑԻՇԱՏԱԿ ՀՈԳ/ՈՑ ԻՍՈՑ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՑ ԻՄՈՑ ՄԱՄ/ՔԱՆԱ... ՈՎՄԱՅՈՑ ՏԷՐ ԼԻՆԻ ԵՒ ՁԱՒ/... ՐՄՈՒՆ...) ԵՒ ՅՈՒԴ/ԱՒ ՄԱՍ/ՆԱԿԻՑ/ԼԻՑԻ ԱՄ/ԷՆ։

Անմեկնելի է արձանագրության ութերորդ տողի ...ՈՎՄԱՅՈՑ հնչյունախումբը։ Բնագրի իններորդ խաթարված տողում հստակ երևում է միայն ՐՄՈՒՆ (թերևս ԿԱՐՄՈՒՆՋ) հնչյունախումբը։ Խաչարձանի վրա հստակ չեն երևում ՐՄՈՒՆ-ին նախորդող և հաջորդող գրերը։ Զագեձորի ոչ խոշոր, գեղեցիկ տառաձևերով փորագրված արձանագրությունն սկսվում է տարեթվի՝ ՈՂՋ (1247), ապա տոհմագրական տեղեկություններից հետո կամուրջը կառուցողի, Մամիկոնյանների շառավիղի՝ Համլիկի, անվան հիշատակությամբ։ Հաջորդ տողերը պատմում են, որ նա կամուրջ շինելով խաչարձան է կանգնեցրել իր հոգու, իր ամուսնու՝ Մամբանի, հիշատակին։ Շինարարական արձանագրության շարունակության վերջընթեր տողերը, որոնք զետեղված են խաչքարի հարավային կողին, նզովքի, անեծքի ձևակերպումն են։

Դեռևս գետի վրա ձգվող Զագեձորի կամուրջը կառուցող Համլիկը Մամիկոնյանների նախարարական տան այն նշանավոր ներկայացուցիչներից է, որն իր տոհմակիցների շարքում հաճախ է հիշատակվում Դսեղ գյուղում հաստատված Մամիկոնյանների հիմնած Բարձրաքաշի ս. Գրիգոր մենաստանի, միջնադարյան Հայաստանի այդ նշանավոր ճարտարապետական հուշարձանախմբի արձանագրություններում և հայտնի է իր շինարարական գործունեությամբ։ Զագեձորի կամրջի կառուցման մասին մեզ հասած 1247 թ. այս արձանագրությունն ընդլայնում է Մամիկոնյանների շինարարական գործունեության և միջնադարյան Հայաստանի կամրջաշինության մասին մեր ունեցած տեղեկությունները։

ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ

Նկ. 1